ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից
«30» մարտի 1993թ. Հ.Ն-0773-I

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Լեզվի կոմիտեն

1. Լեզվի կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է:

2. Լեզվի կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Լեզվի կոմիտեի նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

4. Լեզվի կոմիտեն՝

1) մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը:

2) ապահովում է՝

ա. սույն օրենքի պահանջների կատարումը և լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումը.

բ. հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում դրա լիակատար գործածությունը.

գ.ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը.

3) աջակցում է՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը.

բ. հեռուստառադիոընկերությունների՝ մշակութային, տեղեկատվական, տեղեկատվական-վերլուծական, հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, կրթական և մարզական հաղորդումների լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարմանը.

4) իրականացնում է լեզվաքարոզչություն, լեզվական փորձաքննություն, լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կանխարգելիչ միջոցառումներ, գնահատումներ, ինչպես նաև կազմակերպում լեզվաքաղաքականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ.

5) լեզվական պարզաբանումներ է տալիս հայերենի կանոնարկման և կիրառման, անձնանունների, հայրանունների և ազգանունների, աշխարհագրական տեղանունների ինչպես նաև առանձնահատուկ բարդության տերմինների, հասկացությունների վերաբերյալ:

6) նպաստում է՝

ա. Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը.

բ. ոչ հայախոսների համար լեզվական ուսուցման հատուկ ծրագրերի մշակմանը.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ: